

# ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԽԱՏԱՄՔԸ

Գրիգոր Մագիստրոս Պահաւունին ապրեց եւ գործեց բուռն իրադարձութիւններով յագեցուած ժամանակաշրջան, ականատես եղաւ սելջուկ-թուրքական առաջին արշաւանքներին, Հայոց Բագրատունիների թագաւորութեան անկման ցաւագին գործընթացներին, Հայաստանի հանդէպ Բիւզանդիայի նենգագրութքաղաքականութեան կործանարար հետեւանքներին։ Վաղ հասակից նրա մէջ սնուցուել էր հայրենասիրութիւն, Հայոց պետականութեան, Հայ Առաքելական եկեղեցու հայրենադիր հիմքերի պաշտպանութեան գաղափարը։ Նրա քաղաքական հաւատամքը ձեւաւորուեց հօր՝ Վասակ Հոլումի<sup>1</sup> հայոց սպարապետի եւ հօրեղբօր՝ քաջապանծ սպարապետ Վահրամի զօրաւոր ազգեցութեան ներքոյ։ Գրիգորն ականատես եղաւ օղուգ-թուրքերի դէմ 1021 թ. հօր գըլիստորութեամբ հայ ուազմիների մղած հերոսամարտին, երբ Վարդան Արեւելցու հաղորդման համաձայն, «ի գալ Թուրքին ի Դուին եւ սփոնել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ եւ ցուցեալ մեծ քաջութիւն...»<sup>2</sup>։ Գրիգորը հիանում էր հօրեղբօր՝ Վահրամ Պահաւունի զօրափարի մարտական սիրանքներով, հայրենասիրական խոյանքներով։ Զօրեղբօր եկերական մահուան առթիւ 1045 թ. սիւնեաց արքեպիսկոպոսին յղած թղթում Գրիգորը հոգու ողբով գրում է, որ Վահրամն իր քաջութեամբ, իմաստնութեամբ, բարութեամբ ու բարեգործութեամբ, հայրենասիրական սթափի գործելակերպով անզուգական էր, յար եւ նման Հոմերոսեան հերոսներին<sup>3</sup>։ Անշուշտ, Գրիգորը ծանօթ էր եւ ընթերցել էր Մարմաշչնի վանքի կառուցման առթիւ տակաւին 1029 թ. հօրեղբօր թողած արձանագրութեանը, որը նաեւ պատգամ էր հարազատ տոհմի դաշլիք սերունդներին։ Արձանագրութեան մէջ

<sup>1</sup> ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՃԱՅՑԻ, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 67։

<sup>2</sup> Հաւաքումի Պամուրեան Վարդամայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 98։

<sup>3</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծ. Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 37-39։

նշում էր, որ Պահլաւունիները միշտ եղել են «ամենայն տամբ եւ տոհմի հաւատարիմք տերանց մերոց եւ նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մեր եւ որդոց մերոց...»<sup>4</sup>: Պահլաւունիների փառապանծ աւանդների պահպանմանը նախանձնախնդիր էր նաեւ Գրիգոր Մագիստրոսը, վեհական մտքի տէրը, ականաւոր եւ բազմահմուտ գիտնականը:

1040 թ., ինչպէս յայտնի է, փախճանուեցին Հայոց թագաւորներ Յովհաննէս-Մբատը եւ Աշոտ Դը: Հայոց զօրքը մասսամբ ցրուեց, շատերը հակուեցին Բիւզանդիայի կողմը: Թւում էր, թէ վերջինս ի զօրու է դիւրութեամբ տիրանալ Անի մայրաքաղաքին եւ իրագործել Յովհաննէս-Մբատի չարաբաստ կտակը: Սակայն երբ կայուրութեան զօրքը պաշարեց Անին, «յայնժամ,- հաւաստում է մատենադիրը,- ժողովեցան մնացեալք զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պահլաւունին եւ խնդրէին ելանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց»<sup>5</sup>:

Պահլաւունիների հայրենասիրական ուղեգծին հետեւողականօրէն դիմադարձում էր բիւզանդամէտ խմբաւորումը՝ Վեստ Սարգսի եւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի գլխաւորութեամբ: Թէեւ Վեստ Սարգսի Գրիգոր մագիստրոսի դստեր ամուսինն էր՝, սակայն ոչ նրա կողակիցը, եւ ոչ էլ աները չկարողացան ազգել Սարգսի հայրենադաւ դիրքորոշման վրայ եւ նրան ետ պահել ոճաշաւիդ արարքներից: Վեստ Սարգիսը ժամանակին շահէլ էր Յովհաննէս-Մբատի կտահութիւնը եւ նոյնիսկ նրա կեանքի վերջալոյան դարձել էր նրա հոգաւարձուն, յոյս ակնկարէլուով, որ այդ թագաւորի վախճանուելուց յետոյ Բիւզանդիայի հովանաւորութեամբ կարող է բազմել Հայոց թափուր գահին<sup>6</sup>:

Հայրենադրուժ իշխանի փառամոլ նկրտումներին վերջ տալու նպատակադրումով՝ Պահլաւունիները (այդ թւում նաեւ Գրի-

<sup>4</sup>

*I. Орбели, Надписи Мармашена ("Избранные труды", Ереван, 1963, с. 442).*

<sup>5</sup>

*V. LANGLOIS, Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mesopotamie, auteur arménien du XI<sup>st</sup> siecle ("Journal Asiatique", XIII, Paris, 1869, p.3).*

<sup>6</sup>

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՃԱՅԵՑԻ, էջ 85-86:

<sup>7</sup>

Տե՛ս ՀԱՅՐ ՂԵՂԻՆԻ ԱԼԻՇԱՆ, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135:

<sup>8</sup>

Տե՛ս Պատմութիւն Արքատակիսի Լաստիվերացւոյ, աշխ. Կ. Խորաշեանի, Եղեւան, 1963, էջ 57-58:

գոր Մագիստրոսը) 1043 թ. թագաւոր հռչակեցին տասնութեամեայ Գագիկ Բ.ին: Արխատակէս Հաստիխերտոցու վկայութեամբ Վահրամ Պահլաւունին «այր հզօր եւ անուանի... հանդերձ իւրով ազգակցօք, որդուով եւ եղրօրորդուով իրբեւ երեսուն ազատօք ... կոչեալ առ ինքեան զԳագիկ որդի Աշոտյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, եւ իմաստութեամբ եւ հնարին մուծին ի բաղաբն»<sup>9</sup>:

Մատթէոս Ուռհայեցին Գագիկ Բ.ի օծումը վերագրում է Գրիգոր Մագիստրոսին, գրելով, որ վերջինիս հրամանով է Գագիկին օծել «սրբակեացն Մեծն Մարցէն, որոյ անուն ըստ նախնյն իւրոյ Գրիգոր նանաչի... սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց»<sup>10</sup>: Նոյն է հաւաստում նաև Սմբատ Սպարապետը<sup>11</sup>:

Հասկանալի է, Գրիգոր Մագիստրոսը չէր կարող օծել նորը ընծայ արքային, քանի որ լինելով աշխարհական, գուրիկ էր եկեղեցական կարգից: Ուստի միանշանակ կարելի է ասել, որ «Մեծըն Մարցէն»<sup>12</sup> նոյն ինքը՝ ժամանակի Հայոց կաթողիկոս Պետրոս Գետագարձն էր, իսկ Ուռհայեցու «որոյ անուն ըստ նախնյն իւրոյ Գրիգոր նանաչի» արտայայտութիւնը վերաբերում է օծողին այդ ծիսահանդէսը կատարել հրահանդող Գրիգոր Մա-

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> ՄԱ.ՏԹ-ԿՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 86-87.

<sup>11</sup> Տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 67.

<sup>12</sup> Այս անտառնումը տեղի է տուել տարակերպ մեկնութիւններին Գր. Մագիստրոսի թղթերի հրատարակող Կ. Կոստանեանցի կաթիքով «Մեծն Մարցէն» նոյն ինքը Պետրոս Գետագարձն էր: Նա նաև ենթագրում է, որ «գուցէ Մեծն Մարցէն վերաբերեք Վահրամին, նաև որ նախանձնողը նա էր» (տե՛ս Գր. Մագիստրոսի թրքերը, առաջարան, էջ ԼԲ, ծան. 2): Մ. Օրմանեանի ենթագրութեամբ «Մեծն Մարցէն» մագիստեր (կամ մաստեր) կոչման արևադասձ ձեւն է (տե՛ս Ազգապատում, Ա. Ս. Էջմիածին, 2001, էջ 1430): Հր. Բարթիկեանի կաթիքով «Մեծն Մարցէն» դարձուածը Ուռհայեցու բնագրում հետագայում արուած ընդմիջարկութիւն է «Մարցին» (Եղիպատացին) մականուան արևադասմը, ուստի վերջինիս տակ պէտք է հնաթագրել Գրիգոր Մագիստրոսի որդուն՝ Վահրամ Բ. կաթողիկոսին (Հայրապէտ է զարձել 1066 թ.), որը Եղիպատում Հայրապետական աթոռ էր Հաստատել (տե՛ս ՄԱ.ՏԹ-ԿՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, առաջարան, թարգմ. եւ ծանօթագրութ. Հր. Բարթիկեանի, Երեւան, 1973, էջ 316, ծան. 162).

գիտություն: Պետրոս կաթողիկոսի ծննդավայրը յայտնի է: Գուցիք «մարցին» բառը նրա ծննդավայրն է Նշում եւ ուղղելի է «Մորցին» (եղիպատացին) ձեռով: Գրիգոր մագիստրոսը մտաւոր, գիտական մերձաւոր առնչութիւններ ունէր Պետրոս կաթողիկոսի հետ: Դրանք պահպանուեցին նաև 1045 թ. յետոյ, երբ վերջինիս ուղղած թղթերից մէկում նա գրում է՝ «Գիտեմք, որ հոգաս միշտ վասն իմ»<sup>13</sup>:

*Մատթէոս Ուռհայեցին Հաղորդում* է, որ «ժողովեցան ամենայն նախարարին Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս եւ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց»<sup>14</sup>:

Գրիգոր *Մագիստրոսը սթափօրէն* գնահատեց թուրք-սելլուկների հրոսակամբերի յարձակումների կործանարար ազգեցութիւնը Հայաստանի քաղաքական ճակատագրի վրայ եւ զօրակից եղաւ նրանց դէմ Գագիկ Բ.ի ձեռնարկած յարձակմանը, որը պատկուեց յաջողութեամբ: Գագիկ Բ., վկայում է Ուռհայեցին, այդ յարձակումից առաջ զօրքով շրջում էր «ընդ աշխարհս հայրենինաց իւրոց եւ զամենայն անհնազանդսն ի հնազանդութիւն ածէր»<sup>15</sup>: Գրիգոր *Մագիստրոսն օժանդակել* է թագաւորին կենտրոնախոյս ուժերի դէմ նրա մղած պայքարում: Այնուհետեւ Գարգիկը «քազմուրեամբ զօրօֆ» շարժուել է դէպի Այրարատ, կամենալով «առնուլ զվրէժխնդրութիւն յազգէն հարաւայնոյ: Յայնիմամ սպառազինեալ մեծի իշխանին Գրիգորի որդի Վասակայ Պահլաւունոյ եւ երթեալ զօրօֆ քանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Բջնի մեծի ամրոցին»: Պահլաւունեաց այս ոստանի մասոցցներում էլ հէնց տեղի ունեցաւ վճռական մարտը, երբ «զօրքն Հայոց յաղթեցին զօրացն Պարսից, եւ արարին կոտորած մեծ ի վերայ Հուրաստանի գետոյն եւ զիշխանս բուրք զօրացն ձերբակալ արարին եւ մնացեալին փախստական գնացին ի պարսիկս»<sup>16</sup>:

Այս յաղթանակով փաստօրէն աւելի կովուեց Բագրատունիների եւ Պահլաւունիների զինադաշնկը, որը էականօրէն ամրակայացնում էր երիտասարդ արքայի դիլքերը: Երկու տների սըրբազնագործուած զինակցութիւնը թէեւ մնաց անխախտ, սակայն

<sup>13</sup> Գրիգոր *Մագիստրոսի թղթերը*, էջ 12.

<sup>14</sup> ՄԱՏԹ-ԷՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, էջ 86.

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 87:

<sup>16</sup> ՄԱՏԹ-ԷՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, էջ 87-88.

փոքր-ինչ յետոյ տարապարտօրէն վաստացան Գրիգոր Մագիստրոսի եւ Գագիկ Բ.ի յարաբերութիւնները։ Այդ տիսուր վաստան անշուշտ, ունէր նաեւ անձնական դրդապատճառներ։ Այն հիմնականում հետեւանք էր Վեստ Սարգսի անարդ արարքների։ Զերողականալով աներոջը՝ Գրիգոր Մագիստրոսին հակադրել հայոց թագաւորին, Սարգիսը երկու զօրեղ տոհմերի միջեւ սեպ խրելու նպատակարգումով ամէն կերպ ջանաց թշնամանք սերմանել Գրիգոր Մագիստրոսի եւ Գագիկ Բ.ի միջեւ, վերջինիս ներշնչելով այն միտքը, որ իբր Մագիստրոսը սաստարում է Հայոց թագաւորութեան դէմ Բիւզանդիայի դաւադիր ձեռնարկումներին։ Գագիկ արքան անսաց ամբաստանողին եւ հալածանքներ սկսեց Գրիգոր Բջնեցու դէմ, որը Անիի Սարգիս վարդապետին յղած թղթում դառնացած գրում է, որ ինքը միշտ ջանացել է պաշտպանել հայրենիքի սահմանները։ «Ես,- գրում է նա,- ոչ խրամատել փութացայ, այլ խնամակալել», ի հակալշիու նրանց, ովքեր քանդում են հայրենիքի սահմանները («զցանկ հայրենի»)<sup>17</sup>:

Մագիստրոսը լիովին հասու էր իր շուրջը հիւսուած դաւին եւ Աստծուց խնդրում էր. «Քրիեա զանձն իմ ի խորամանկութենի նոցա... համբարձի զաշս իմ, մի ամաչեցից եւ մի ծիծաղեցին զինեւ թշնամիք իմ»։ Իսկ նրա թշնամիները տենչում էին՝ «Ե՞րբ իցէ զի մեռցի եւ կորիցէ անուն նորա»<sup>18</sup>։ Թշնամիները միակամ եւ միաբան էին եւ, ինչպէս գրում է Մագիստրոսը, «նոյն որպէս առիւծ վարանին ի դարանի յափշտակել զիս. եւ դարձեալ պատեցան զինեւ, ուշ ելեալ խոնարհեցուցանել զիս յերկիր. եւ զի միաբանութեամբ յարուցեալ ի վերայ իմ..., հատուցանել ինձ չար փոխանակ ընդ բարւոյ ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ»<sup>19</sup>:

Գուցէ հակառակորդ հոսանքին տօն է տուել նաեւ Պետրոս կաթողիկոսը, որի նկատմամբ Մագիստրոսը անթաքոյց համականք էր տածում։ Դաւադրութիւնը, որ զերծ չէր անձնական եւ քաղաքական շահարկումներից, տուեց իր դառը պտուղները։ Մագիստրոսը կծու, անիրական որակումներ է անում Գագիկ Բ.ի հասցէին, նրան համեմատելով սեռական անուժութեամբ, յաճախամիզութեամբ տառապողի, արուամոլի ու անողամիտի

<sup>17</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 55.

<sup>18</sup> Նոյն տեղում, էջ 52.

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 52-53.

հետ: Իր հանդէպ Գագիկ արքայի վերաբերմունքը Մագիստրոսը համարում է նրա անփորձութեան, երիտասարդութեան արդիւնք: Գագիկը՝ գրում է նա, «ոչ երկիրդին Աստուծոյ ի մանկական տիսն վարժի, կարծեմ, եթէ ոչինչ օգտէ. քանզի չար ախտ անձին հանդիպի ի վատրար հրահանգից եւ յանուսումնութենէ եւ ի չար ունակութենէ»<sup>20</sup>: Մտեղծուած պայմաններում Գրիգոր Մագիստրոսը ստիպուած Անիից հեռացաւ Ամբերդ ամրոց՝ Պահաւունիների միւս կենտրոնը, իսկ այնտեղից՝ Բջնի:

Գագիկ Բ. շուտով զգաց, որ Գրիգոր Մագիստրոսն անպարտ է: Նա համոզուեց, որ նախկինի պէս երկրի համար բարդ ու օրհասական իրավիճակում իրեն յենարան կարող են լինել գըլ-խաւորապէս Պահաւունիները՝ ի դէմս Վահրամ զօրապետի, Գրիգոր Մագիստրոսի եւ նրանց շուրջը համախմբուած գործուն ուժերի: Ուստի Գագիկն Անիի Սարգիս վարդապետին ուղարկեց Գրիգոր Մագիստրոսի մօտ, որպէսզի տարհամոզի նրան եւ փոխել տայ երիտասարդ արքայի հանդէպ նրա դիրքաւորումը: Սարգիս վարդապետը նախ մէկնեց Ամբերդ եւ այնտեղից թուղթ յղեց Բջնիում գտնուող Մագիստրոսին, յորդորելով մոռացութեան տալ արքայի հետ ունեցած վիճերն ու հակամարտութիւնը եւ նախկինի պէս հաւատարմութիւն դրսելու նրա հանդէպ: Սակայն Մագիստրոսը մնաց անդրդուելի՝ իր նկատմամբ արքայի ցուցաբերած տարապարտ վերաբերմունքի պատճառով, նրան բնորոշելով՝ որպէս «մանկամիտ», ուրիշի ազդեցութեանը ենթարկուող:<sup>21</sup>

Գրիգոր Մագիստրոսն անշուշտ, նկատի ունէր Հայաստանում խմորուած կացութիւնը, երբ Վեստ Սարգիսն ու իր կողմնակիցները մի պահ նոյնիսկ դարձան դրութեան տէրը: «Իմ է-գրում է նա, - բոլորիցն բեկումն մարմորիմ, ոչ տեսանելով զելս իրացնի»: Խորասես քաղաքականագէտը հասկանում էր, թէ ինչպիսի վտանգ է սպառնում հայրենի երկրին՝ Վեստ Սարգսի գլխաւորած խմբաւորման դաւադիր ձեռնարկումների պատճառով: Նա վշտից տոչորուած գոչում է «զիս<sup>o</sup>րդ վիճակեցաք ի վերջին աւուրս, վիատեալք եւ վիրաւորեալք վատրարութեամբ եւ միայն եղեալք վատնիչք տերութեան գանձուն»: Նա նկատում է նաեւ, որ արդիւնքում «տարագիր մեզ լինել տակաւին

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 68-69.

<sup>21</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 52:

հասանել, եւ ոչ յարկս հարցն հանգչի»<sup>22</sup>: Հայաստանի անյոյս ու թշուառ կացութիւնը նկատի առնելով՝ նա ոգեկոչում է հայոց նահապետներին, թագաւորներին, ի հարկէ, նաեւ թագրատունի գահակալներին, նշելով, որ խամրել է հայոց փառքը, քանի որ այլեւս չկան նրանց արժանի յետնորդներ՝<sup>23</sup>:

*Մագիստրոսը շարունակեց Գագիկի Բ.-ի հանդէպ իր անբարեհած վերաբերմունքը, նրա հասցէին նետելով թունալից խօսքեր, նրան մեղադրելով այն բանում, որ իբր արքան իր հանդէպ «մահ եւ կապանս հնարեր գաղտնի, զի ի կենաց լուծցէ. եւ ամենեցուն պատուիրէր թշնամեաց իւրոց եւ իմոց, որք յաղագը նորա մաքառէին ընդ իս...»*<sup>24</sup>: Այս պայմաններում նա ստիպուած հեռանում է Տարօն, մերժելով թագաւորի հաշտութեան առաջարկը: Տարագրուած *Մագիստրոսն իրեն համեմատում է մայրական կաթից զրկուածի, իր հայրերի գերեզմանոցում հանդչելու իրաւունքից զուրկ մնացած հայրենակորոյս աստանդականի հետ:*<sup>25</sup>

*Այդուհանդերձ Գրիգոր Մագիստրոսը չվարանեց արքայի հետ հաշտութեան եւ համագործակցութեան եզրերի դիմել: Գագիկի Բ.-ին յրած պատասխան նամակում *Մագիստրոսը նրան յորդորում է. «Զմտաւ ա՛ծ զբութիւն ոմանց եւ զ'ի չարն եւ ի վատթարագոյնն կողմ զիակամիտողն զինզ խրատողացն... Եւ ի բարձրագոյնն մակարդակ լեառն ճգեա՛ զբոյդ վեհական խոհեմութիւն»*<sup>26</sup>: Նա արքային յորդորեց փակել իր դէմ թշնամանք յարուցողների երախները եւ չխոցուել իրեն, խոստանալով ներել նրան: «Եւ ես ներեւ եւ աղաչեմ, որ ձեզ կեանք տայ եւ բարի միտս, ո՞ղջ լերում», եզրափակում է իր խօսքը *Մագիստրոսը*<sup>27</sup>:*

1045 թ. Գագիկի Բ., չանալով Վահրամ Պահլաւունու եւ նրա կուսակիցների յորդորներին, վեսո *Մարգսի եւ Պետրոս կաթողիկոսի խորհրդով ընդունեց Մոնոմախ կայսեր հրաւէրը եւ ընկաւ նրա լարած որոգայթը, զրկուելով թագաւորական գահից: Գրիգոր Մագիստրոսը նոյնպէս դարձաւ կայսեր նիւթած դաւադ-*

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 62.

<sup>23</sup> ՏԵ՛ս նոյն տեղում, էջ 59-61.

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 139.

<sup>25</sup> ՏԵ՛ս նոյն տեղում:

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 210.

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 212-213.

րութեան գոհը եւ Գագիկ Բ.ի ետեւից մեկնեց կ. Պոլիս, որտեղ  
նա ճաշակեց Հայոց թագաւորութեան վերացման դառնութիւնը<sup>28</sup>:

Կայսեր կամքով գահընկէց արուած Պետրոս կաթողիկոսին  
յղած նամակում Գրիգոր Մագիստրոսը դառնութեամբ գրում է,  
որ հաւատացել է ստայօղ խոստումներին եւ երբ վերադարձել է  
հայրենիք, տեսել է, որ այն վաճառուած է, իրենք յայտնուել են  
հալածականների, տարամերժուածների վիճակում<sup>29</sup>:

Այդպիսով Գրիգոր Մագիստրոսն ընկաւ Հայոց անկախ պե-  
տականութեան վերացմանը նպատակառողջուած կայսեր լարած  
նոյն որոդայթը, որին գոհ գնաց նաեւ հայոց թագաւորը:

Հակառակ վերը յիշատակուած տեղեկութիւնների, Սամուչէ<sup>30</sup>  
Անեցին գրում է, որ իբր Գրիգոր Մագիստրոսը Բաղրատունեաց  
վերջին թագաւորի նկատմամբ ունեցել է նոյն դիրքաւորումը,  
ինչպիսին ունէին Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը: Այս  
երեքը, գրում է ժամանակագիրը, «Անենգեցին զԳագիկ եւ զԱնի  
ետուն ի կայսրն Յունաց. վասն որոյ ելին ի բընիկ աշխարհեն  
իւրեանց՝ տէր Պետրոս եւ Գրիգոր Վասակայ որդին. Գագիկ  
եւ այլք իշխանէ Հայոց եւ եկին ի Հոռոմ»<sup>31</sup>:

Ամենայն հաւանականութեամբ, Գագիկ Բ. կ. Պոլիս է մեկ-  
նէլ առանց Գրիգոր Մագիստրոսի կարծիքը հաշուի առնելու:  
Ըստ Երեւոյթին արդէն տարագիր եղած Գագիկ Բ. Մագիստրո-  
սին նամակ է ուղարկել, նրան մեղադրելով իրեն չսատարելու  
համար: Պատասխան թղթում Մագիստրոսը գրում է. «Այլ դու  
երէ ի մէնց օգնութիւն խնդրեցեր, ո՞ր էր, որ օգնէր. ո՞ր  
արար տերենակ զիս. զիարդ նաևաչես զիս՝ հալածելոցն հաւա-  
ֆի՞չ կամ խոռութեան շիզուցիչ, երէ ընդ խազմարարս խոռ-  
վիչ, ասա՛ առաջի տեառն»<sup>32</sup>:

Հայագիտութեան մէջ հնչել են կարծիքներ՝ Գրիգոր Մա-  
գիստրոսի բիւզանդամոլութեան մասին: Իբր նա «այնքան էր  
տոգորուած թիւզանդական գաղափարներով, որ հետութեամբ  
կարող էր մոռանալ հայութիքի շահերը»<sup>33</sup>, - գրում է Լէոն: Այլ

<sup>28</sup> ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍԻՎԵՐՏՏՅԻ, էջ 62.

<sup>29</sup> ՏԵ՛՛ Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 13.

<sup>30</sup> ՍՍ.ՄՌՈՒԷԼ ԱՆԵՑԻ, Հաւաքմունի ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893,  
էջ 107-108.

<sup>31</sup> Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 210.

<sup>32</sup> ԼՅՕ, Հայոց պատմութիւն, հա. Բ. («Երկերի ժողովածու», հա. Բ., Երեւան, 1967,  
էջ 646).

առիթով վաստակաւոր պատմաբանը մեղմելով Մագիստրոսին իր տուած բնութագիրը, գրում է, որ «յանական կուսակցութեան երրորդ խոշոր ներկայացուցիչ Գրիգոր Բջնեցին աւելի չափաւոր հակումներ էր ցոյց տալիս ամենից առաջ հենց այն պատճառով, որ օրա մէջ խօսում էր տոհմային իմենասիրութիւնը»<sup>33</sup>: Էջոյի կարծիքով Կ. Պոլիս մեկնած Գրիգոր մագիստրոսը «մենակ մնացած ուխտադրութեան զոհ դարձած Գագիկի կողմը չանցաւ՝ հայրենի շահերը պաշտպանելու համար, այլ բոլորովին հակառակ ուղղութիւն բռնեց», իր տիրոյթները յանձնելով կայսեր, որով իբր նա «առաջին խոշոր եւ կործանարար հարուածը» հասցրեց Գագիկի դատին<sup>34</sup>: Բայց չ<sup>35</sup> որ Արիստակէս Լաստիվերտցին՝ ժամանակամերձ պատմիչը, գրում է, որ Գրիգոր Մագիստրոսն իր կալուածները յանձնել է կայսեր միայն այն ժամանակ, երբ համոզուել է, որ այլեւս Գագիկի Բ.ին թոյլ չեն տալու հայրենիք վերադառնալ: «Գրիգոր որդի քաջին վասակայ,- գրում է պատմիչը,- ելեալ եւ նա գնաց առաջի թագաւորին: Եւ քանի այր իմաստուն էր եւ խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ո՛չ այլ ո՛ք, իբրեւ ետես երէ ոչ են քողլոց զԳագիկի ի տեղի իւր, յառաջ կացեալ տայ զրանալին Բջնոյ ցքագաւորն, եւ զամենայն զիւր զիայրենի ժառանգութիւնն»<sup>35</sup>:

Մէկ այլ կարծիքի համաձայն, Գրիգոր Մագիստրոսն իբր թէ եղել է «Յովիհաննես-Սմբատի «կտակը» նիւթողներից մէկը»<sup>36</sup>, ինչը սակայն չի հաստատում սկզբնաղբյուրներով: Իսկ մէկ ուրիշ հետազոտողի կարծիքով «Պետրոս կաքողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը, Վեստ Սարգիսը նպատակ ունին վերացնել թագրասունեաց թագաւորութիւնը եւ իշխանութիւնը վերցնել իրենց ձեռքը: Նրանք իրենց նպատակն իրագործելու համար վենական յարաբերութիւնների մէջ էին մտել Բիւզանդական կայսութեան հետ»<sup>37</sup>:

<sup>33</sup> Նոյն տեղում, էջ 669.

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 679.

<sup>35</sup> Արիստակէս Լաստիվերտցի, էջ 62:

<sup>36</sup> ՅՈՎՀԱՆՆԻՍԵՍՆ Ա., Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, I, Երևան, 1957, էջ 136:

<sup>37</sup> Տե՛ս ՄՆԱՑԱԿԱՆԵՍՆ Ա., Թոնիրակեան շարժման մի քանի գլխաւոր հարցերի մասին («ՀԱՄԱ ԳԱ Տեղեկադիր (Հաս. գիտ.)», 1954, N 3, էջ 74): Հետագայում նա հրաժարուեց այս տեսակէտից (տե՛ս «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1968 թ. օգոստ. 21-ի համարը).

Գրիգորը ստիպուած եղաւ իր տիրոյթները փոխանակել Միջագետքի հետ։ Արխտակէս Լաստիլիքըցու վկայութեամբ, նա իր կալուածները յանձնում է կայսեր, «եւ մեծարեալ ի նմանե՛ առնու զպատիւ մագիստրոսութեան, եւ զտեղիս բնակութեան ի սահման Միջագետաց գիւղս եւ քաղաքս, գրով եւ ոսկի մատանեաւ»<sup>38</sup>։ Հասկանալի է, Մագիստրոսն, ինչպէս եւ Գագիկ Բ. դատապարտուեցին աքսորի։ Սակայն Մագիստրոսը երբեք չը համակերպուեց այդ կացութեանը, եւ ոչ էլ Հայոց թագաւորութեան վերացման իրողութեանը։ Նրա հոգուն ծանրացած էր իր հայրենիքի դէմ դաւադրութիւն նիւթած կայսեր չնորհած պաշտօնը, որի պատճառով նա ստիպուած եղաւ մօտ 13 տարի կրել տարագրութեան յոգնաշխատ լուծը, ծանր մտածումներով լի կացութեան դառնութիւնը։ Սակայն իր դաղափարների մէջ նա մնաց անյողողող։ Հայրենակորոյս Գրիգոր Մագիստրոսը յոյսը չը կորցրեց Հայոց թագաւորութեան վերականգնման անստոյդ թուացող հեռանկարի նկատմամբ։ Ոգեկոչելով Հայոց հերոսական անցեալն ու Հայոց թագաւորների փառքը, նա կարծում էր, որ տակաւին կանգուն է Հայկի ու Արշակ արքայի երկիրը, վերականգնուելու է Հայոց թագաւորութիւնը, «եւ թէպէսէւ ումանց անարի եւ անօր գոլ, սակայն տիրապետեալ տանս Թորգումեան, պահելով զաքոռն»<sup>39</sup>։ Հնդ որում Մագիստրոսը թէեւ յունական գիտութեան եւ մշակոյթի ջատագովն էր, սակայն միշտ դիմադիր գիրքաւորում ունէր Բիւզանդիայի նուաճողական նկըրտումների նկատմամբ։ Ուշագրաւ փաստ է, որ գեռեւս թոմանոս Գ. կայսեր (1028-1034) օրօք Մագիստրոսն իր որդուն կոչ էր անում ուազմի ելնել Հայաստանը շահատակող բիւզանդական նիկողաս գօրապետի դէմ։ Որդուն ուղղուած բանաստեղծութեան մէջ Մագիստրոսն այդ գօրապետին համարում է «աւարառով աւերօն»։ Որդուն ոգեվառելու միտումով նա ոգեկոչում է Հայոց քաջապանծ նախնի «Թորգումեան» Հայկին, գրելով։

Արդ միլարեայն դու պնդեա՝ զլայնալին հայրենին.

Զերեքթեւեանն դու միեա՝, յառաջ մատի՞ր եւ քաղեա'.

Այս ժեզ Բէլայն հաս հանդէս եւ Թորգումեանն Հայկայ...<sup>40</sup>

<sup>38</sup> ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑՑԻ, էջ 62.

<sup>39</sup> Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 61.

<sup>40</sup> Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 234.

*Մագիստրոսն ի դէմս Նիկողասի, նկատի ունի Վասպուրականի կառավարիչ (1030-ական թթ.) Նիկոլայոս Խրիսելիոս Բուլղարին, որին յիշում է Կեղբենոսը<sup>41</sup>: Վասպուրականի այս կառավարիչը ջանում էր ընդպայնել Բիւզանդիայի սահմանները դէպի հիւսիս՝ Բագրատունիների Հայոց թագաւորութիւնը: Նրա այդ մտայլացումը կուահելով, Մագիստրոսը որդուն կոչ է արել դիմակայել նրան<sup>42</sup>:*

*Գրիգոր Մագիստրոսը ջանքեր չխնայեց հայրենիքի միասնութիւնը, անկախութիւնը պահպանելու համար: Այս մասին նա գրում է Անիի Սարգիս վարդապետին ուղղած թղթում<sup>43</sup>: Նա ծանր տարատ Բագրատունեաց թագաւորութեան անկումն ու դրան հետեւած իրողութիւնները: Զօրեղբօր մահուան առթիւ սիւնեաց հովուապետին գրած նամակում Գրիգորը նախ շեշտում է Միջագետքի կառավարիչի պաշտօնին իր խաչուած լինելու հանդամանքը, զեղում իր խոցուած հոգին, նշելով, որ զրկուած է հայրենի ժառանգութիւնից, եւ մատնուել է թշուարական ու անյոյ կացութեան<sup>44</sup>: Ըմբռատաճայն այս թղթում յառնում են նրա հայրենաբաղ էութիւնն ու հաւատամքը, տոհմասիրութիւնը, ի հարլիք նաև ազատաշունչ գաղափարները:*

*Գրիգոր Մագիստրոսը Միջագետքի կառավարիչ եղած ժամանակ ամէն գնով ջանում էր պաշտպանել Հայաստանը թուրքսկելջուկեան հրոսակներից: 1048 թ. սեղուուկ-թուրքական զօրքը Ատրպատականի կողմից ներխութեց Հայաստանի Բասէն եւ Կարին գաւառներ, սրածելով ու աւարի մատնելով քրիստոնեայ ըընակչութեանը: Բիւզանդական բանակները Վասպուրականի կատապան Ահարոն Բուլղարի եւ Անիի ու Իբերիայի բանակաթեմի կառավարիչ, ծագումով հայ Կեկաւմենոսի գլխաւորութեամբ անյաջող դիմաղրութիւն ցոյց տուեցին սեղուուկ-թուրքերին<sup>45</sup>, որոնք գրաւեցին Արծն վաճառաշահ քաղաքը, կոտորելով նրա բազմա-*

<sup>41</sup> Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԱՆ թարգմ., առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հր. Բարբիկեանի, Երեւան, 1979, էջ 111.

<sup>42</sup> Տե՛ս ԲԱՐԹԻԿԵՆ ՀՐ, Գրիգոր Մագիստրոսի հաղաքական կողմնորոշման հարցի շուրջը («Եջեր հայ ժողովրդի պատմութեան եւ բանափրութեան», յօդուածների ժողովածու, Երեւան, 1971, էջ 68-72).

<sup>43</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 55.

<sup>44</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 36.

<sup>45</sup> Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԱՆ, էջ 158-161.

հազար բնակիչներին<sup>46</sup>: Զարհուրեկի կոսորածի մասին ցնցող տողեր է թողել Արխտակէս Լաստիվերտցին՝ այդ սպանդի ականատեսը, որը հաւասարում է թէ՝ «աչօք մերով տեսաֆ եւ ընդ փորձ չարեացն անցաք»<sup>47</sup>: Թռում էր, թէ ահաւոր դէպեհը պէտք է միաբանէին քրիստոնեաներին: Հարկաւ, բիւզանդական գորքին օգնութեան փութացին նաև վրացիները՝ Լիպարիտ իշխանի, եւ հայերը՝ Գրիգոր Մագիստրոսի գլխաւորութեամբ: Մելջուկ-թուրքերի դէմ մարտնչող Կեկամենոսի եւ Ահարոն Բուլղարի գլխաւորած 60 հազար զօրայիններին նախ միացաւ Գրիգոր Մագիստրոսը՝ «Հայոց հզօր իշխաննեն, որ ուներ զպատիւ մագիստրոսութեան»<sup>48</sup>: 1048 թ. սեպտեմբերի 18-ին Բասէնի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում դրսեւորուեց բիւզանդական զօրապէտների անմիաբանութիւնը: Մարտի թունդ պահին Ահարոն Բուլղարն իր զօրաբաժնով նահանջեց, պատճառ դառնալով քրիստոնեայ զօրքի ծանր պարտութեան<sup>49</sup>:

Գրիգոր Մագիստրոսը Բասէնի աղէտից յետոյ չդադարեցրեց գիմակայութիւնը թուրք-սելջուկներին: Մարգիս վարդապետին ուղղած թղթում նա գրում է, որ թուրքերից («Հարաւային բոնութիւնից») պաշտպանել է ոչ միայն Միջագետքը, այլեւ Վասպուրականը, Տարօնը, ապահովելով նրանց խաղաղութիւնն ու պատշաճ օրինակարգը: «Հարցիր,- կարդում ենք այդ թղթում,- ընդ բոլոր Յարեթեան նահանգի, զի՞նչ յաւուրս յայսոսիկ ի բոլոր տան Մարդպետական եղեալ գործառնութիւնը՝ ի քաղաքն եւ ի գեղեակո, յաւան եւ ի գիւղս, յանապատը եւ ի պատս, ի բոլոր տնօրինական առաջարկութիւնն կամ ի հարաւային բոնութենեն խաղաղանալս, զինչ եւ ի Միջագետը...»<sup>50</sup>:

Վարդան Արեւելցին նոյնպէս Գրիգոր Մագիստրոսին Միջագետքի դուքս նշանակելուց յետոյ շեշտում է սելջուկ-թուրքերի դէմ նրա պայքարը: Պատմագիրը գրում է, որ Միջագետքի դուքս նշանակուած Գրիգոր Մագիստրոսը «առնու ընդ իւր զԱպիրատն զիշխանն Վրաց, եւ այլ եւս երկու Մաժիստրոսս, եւ

<sup>46</sup> ՏԵ՛ս նոյն տեղում, էջ 160, ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 103.

<sup>47</sup> ՏԵ՛ս ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑՅԻ, էջ 80: ՏԵ՛ս նաև ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՅԻ, էջ 107:

<sup>48</sup> ՏԵ՛ս ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑՅԻ, էջ 81,

<sup>49</sup> Գրիգոր Մագիստրոսի բղբերը, էջ 65:

երքայ ընդդեմ Բրեհիմայ զօրագլխի Տուղրիլ-Բէգ սուլտանին<sup>50</sup>:

Գրիգոր Մագիստրոսը քաջ գիտակցում էր, որ սելջուկ-թուրքերն առաջին հերթին սպառնում են Հայաստանին, որը Բիւզանդիայի նենդադրուժ քաղաքականութեան պատճառով փաստորէն մնում էր անպաշտպան: Իրենք՝ թուրք-սելջուկները եւս տեղեակ էին Հայաստանում ստեղծուած կացութեանը: Դրանից խրախուսուելով Տուղրիլի զօրապետներ Իբրահիմ Յանալն ու Գթըլ-մուշը 1048 թ. յարձակուեցին Վասպուրականի եւ յարակից շըրջանների վրայ: Նրանք,- գրում է ժամանակակից պատմիչը,- «ելեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնեից իբրեւ գայլս բանցեալս անյագեալս ի կերակրոյ...»<sup>51</sup>: Թուրքական այդ զօրախմբերը, ինչպէս հաղորդում է Ուռհայքին,- «անքի բազմութեամբ գան ի յաշխարհն Հայոց, վասն զի ի ձեռացն Հոռոմոց գիտացին անտէր եւ անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս բազս եւ զիզօրս բակեալ հանին յարեւելից Հոռոմք...»<sup>52</sup>:

Բագրատունեաց թագաւորութեան բարձումից յետոյ Բիւզանդիան վերացրեց նաեւ Հայոց պետականութեան յինարաննը՝ կաթողիկոսական իշխանութիւնը: Քաղաքականապէս եւ հոգեւորապէս գլխատուած Հայաստանը դիւրութեամբ աւար դարձաւ սելջուկ-թուրքական նուաճողների համար: Այդ օրհասական իրավիճակում Գրիգոր Մագիստրոսը ամէն ջանք ի գործ դրեց Հայրենիքը պաշտպանելու համար: Նա 1050-ական թթ. պայքար է ծաւալում թոնդրակեան աղանդի դէմ, որին յարում էին նաեւ Հայաստանում մնացած ազատ դասի որոշ ներկայացուցիչներ, խարխլելով ոչ միայն Հայոց եկեղեցու, այլեւ աւատատիրական համակարգի հիմքերը, էլ աւելի ջլատելով երկրի առանց այդ էլ խիստ նուազած պաշտպանունակութիւնը: Եկեղեցին, նրա ծիսակարգը, դաւանաբանութիւնը թոնդրակեցիների կողմից մերժելը հաւասարազօր էր համարում Հայ հասարակութեան հոգեւոր համագոյութեան, նրա միասնութեան, Եկեղեցու դարաւոր հիմքերի խարիսխան:<sup>53</sup> Գրիգոր Մագիստրոսը գործում էր Բիւզան-

<sup>50</sup> ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼ.8Ի, էջ 99.

<sup>51</sup> ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ, էջ 65.

<sup>52</sup> ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՃԱՑԵՑԻ, էջ 102.

<sup>53</sup> ՏԵ՛՛ Գրիգոր Մագիստրոսի բդրերը, էջ 154-155, 164, 168.

<sup>54</sup> ՏԵ՛՛ ԽՍ.ԶԵՐԵԱՆ Լ., Գրիգոր Պահաւունի Մագիստրոս (985-1058 թթ.), ԼԱՆՃԵԼԸ, 1987, էջ 227.

դիայի կայսեր հրամանով<sup>55</sup>, սակայն, ինչպէս հաւաստում է նա, աղանդաւորներից «ոչ զոք վճառեցաք մարմնական պատուհասիք, թէպէտեւ յօրէնսն հրամայէ զվերջին պատուհասն կըել նոցա»<sup>56</sup>: Աւելին, Մագիստրոսը ընդառաջեց այն թոնդրակեաններին, ովքեր հրաժարուեցին իրենց հայեցքներից եւ վերադարձան Հայոց եկեղեցու գիրլը: Նրա հրամանով հազարից աւելի աղանդաւորներ վերամկրտուեցին<sup>57</sup>:

Գրիգոր Մագիստրոսը Հայոց եկեղեցու հայրերին յորդորում էր չմեկուսանալ ժողովրդից, լինել համերաշխ, ջանքեր ներդնել երկրի միասնութիւնն ու ամբողջականութիւնը պահպանելու համար: Ուշագրաւ է, որ նա Մոկաց Գրիգոր եպիսկոպոսին ուղարկած նամակում այն միտքն է արտայայտում, որ Աստծու պատուիրաններից ամենազլիսաւորը հայրենիքի սահմանները պահպանելու պատգամն է<sup>58</sup>: Անշուշտ, պատահական չէր, որ Մոնմախ կայսրը հայոց թագաւորի եւ կաթողիկոսի հետ հայրենիքից արտաքսեց նաեւ Գրիգոր Մագիստրոսին: Այդպիսով կայսրը չառարկեց հաւատակից հզօր հարեւանի հանդէպ հայերի տածած վստահութիւնը, եւ նպատակադրուեց քաղաքականապէս եւ հոգեւորապէս գլխատել Հայաստանը: Բիւզանդական իշխանութիւններն իրենց որոգայթները հիւսում էին վեստ Սարգսի միջոցով եւ քաջատեղեակ էին, որ հայոց երեք առաջնորդները՝ Գագիկ առքան, կաթողիկոսը եւ Գրիգոր Բջնեցի Մագիստրոսը կայսրութեան եւ նրա եկեղեցու հանդէպ հակոսնեայ դիրքերում են (Պետրոս կաթողիկոսը դէմ էր երկու եկեղեցիների դաւանական միութեանը, ուստի նա եւս արտաքսուեց): Ի դէպ՝ նշելի է նաեւ այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը՝ հայրենի աւանդութիւնութեալն ու պահապանը, պետականօրէն օրինապատշաճ իր վարքագծի ծիրում երեք չդաւեց իր կոչմանը եւ չթղթակցեց վեստ Սարգսի հետ, թէեւ, վերջինս, ինչպէս նշուեց, իր փեսան էր, բայց իր անձնապատճան քաղաքական շահախնդրութիւններով իրենից վանեց նաեւ աներոջը:

Հայրենասէր հոսանքի հոգին՝ Վահրամ Պահլաւունին նոյնպէս դարձաւ կայսրութեան դաւադիր խաղերի զոհը եւ Հայոց թագաւորութեան վերացումից յետոյ զինուրուագրուելով կայսրու-

<sup>55</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 158.

<sup>56</sup> Նոյն տեղում, էջ 162:

<sup>57</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 158:

<sup>58</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 91, 101 եւ այլն:

թեանը, զոհ գնաց Դուինի ամիրայի դէմ նրա յարուցած պատերազմում<sup>59</sup>: Թւում էր, թէ Բիւզանդիայի կայսրը հասաւ իր նպատակին: Հայաստանը կողըքեց իր պետականութիւնը եւ հպատակուց նրա կամքին: Սակայն Հայոց թագաւորութեան բարձումը էականօրէն կանխորոշեց նաեւ կայսրութեան քաղաքական ճակատագիրը:

Գրիգոր Մագիստրոսը Պահլաւունեաց վիառապանծ տան չնորհազուն զաւակը, հայոց մտաշխարհի կարկառուն ներկայացուցիչն ու առաջնորդը, ծանր ապրեց հայրենիքին պատուհասուած դժբախտութիւնը եւ բոլորանուէր ջանքերով աշխատեց նըրանից հեռու վանել թուրքական ցեղերի օրհասաբեր շահատակութիւնները: Մեծակորով գործչի, ներհուն գիտնականի կեանքը յիշաւի ոգու մեծագործութիւն էր:

ՎՐԵՋ ՎԱՐԴԱՆԵԱՆ

## The Political Belief of Grigor Magistros

VREJ VARDANYAN

(summary)

The political stand and belief of Grigor Magistros formed under his father's, the famous general Vasak Bahlavouni's, and his uncle's, commander Vahram's, adherent effects.

During the agony of his homeland, in the year 1043, Grigor Magistros with his relatives and other fellow noblemen crowned Gagik 2<sup>nd</sup> as the new king of the Bakradounian throne. Magistros stood beside the crowned king and faced the decentralized internal forces and fought back foreign "Seljuk – Turkish" attacks.

Magistros opposed emperor Monomakhos's invitation for Gagik to visit Constantinople. Because of this opposition, Magistros became a victim of the Emperor's conspiracy and was sent to Mesopotamia for 13 years as the emperor's employee. During that period, he continued his patriotic defense against the "Seljuk-Turkish" attacks, protecting the Southern provinces of Armenia.

---

<sup>59</sup> Տե՛ս ԱՐԴԱՎԱԿԱՆ ԼԱՍՏԻՎԵՐՏՑՈՒՅԻՆ, էջ 63.